

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐ", Ի

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Է ՔՂԹԱԿՈՒԹԻՒՆ  
ՊԵՏՔ Ե ՈՒՂԱԵԼ ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի  
ԳԱՀԻՐԷ

Նամակատուի Թիւ 117

DIRECTION DU JOURNAL

NOR-OR

CAIRE, B. P. N° 117

# ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԲՆԹԵՐՑԱՍԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գանիբէի համար	Տարեկան,	50
»	» Վեցամսեայ	30
Շրջակայից	» Տարեկան,	60
»	» Վեցամսեայ	35

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՇԱՄԱՐ		
Տարեկան . . . .	Ֆրանգ	18
Վեցամսեայ . . .	»	10

ՌՈՒՍՒՌՅԵՒ ԿՈՎԱԿԱՍԻ ՇԱՄԱՐ		
Տարեկան . . . .	Րուբլի	7
Վեցամսեայ . . .	»	4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԸ ԿԱՆՈՒԿ Է  
ԵՒ ԲՂԵՍԱՐԻ ԾԱՆՔԸ  
ԹԵՐԵՐԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆԸ ՎՐԱՅ Է:

Ձեռագիրներն հոռ չին դարձուիր:

Արտագր. ժ. ՄԻՒՆԻՒԹԷ

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՕՐԻ Վարչութիւնն իր երեկուան նիստին մէջ, որ տեղի ունեցաւ կէս օրէ ետքը ժամը 4 1/2ին, ընդունեց նախկին նախագահ Ազն. Տիար Սմբատ Փափազեանի հրատարակման ու անմիջապէս վերակազմեց նոր Գրական Վարչութեան, որ կը բաղկանայ հետեւեալ անձնակազմով ինչն էրէն.

ՆԱԽԱԳԱՀ. Վսեմ. Եւստոֆ Պեյ Աղիզ, անդամ Միջազգային դատարանին Գահիրէի:

ԳԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ. Տիար Արմաւր Փափազեան, փաստաբան Միջազգային փաստարանին Գահիրէի:

ԱՐՏՈՆԱՏԷՐ "ՆՈՐ-ՕՐ"Ի, Մ. Ժիւլ Միւշէյէ հրատարակագիր, Տէր և Տնօրէն "Գոռոյի" Տիւնի "Օրաթերթի":

ԽՈՐԱԳՐԱՊԵՏ "ՆՈՐ-ՕՐ" Ի. Տիար Սմբատ Բիւրատ, Ուսուցիչ, Հիմնագիր - Տնօրէն կեդր. կրթարանին Գահիրէի և Ատենապետ Գործ. Ժողովոյ Լսարան - Ընթերցատուն ընկերութեան:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆՔ. Տիար Գառնիկ Չալուզեան, Հաշուակալ Ռամէյի երկաթուղեայ վարչութեան, և Տիար Կ. Չուրազեան, անդամ Գործ. Ժողովոյ Լսարան-Ընթերցատուն ընկերութեան որ մինչոյն ժամանակ կ'ստանան թերթի մասակարարութիւնը:

Երեկուան նստին մէջ տրուեցան կարեոր որոշումներ "Նոր Օր"ի յարատեւութիւնն ապահովող միջոցներու վրայ, ինչպէս նաև թերթին պարունակութիւնն աւելի ճիւղայնելու մասին ինչ ինչ կարգադրութիւններ եղան:

Գահիրէ 18 Յուլիս 1900

## ԳԱՀԻՐԷԻ ԳԱՆՍԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԸ

ԵՒ

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

(Շար. նախորդ թիւէն)

Ուսուցիչներու որակէն աւելի քանակը գըրաւած էր դպրոցի հոգաբարձութեան ուշադրութիւնը: Ամենքն ալ իրենց վկայագիրներովն ու փայլուն անցեալովը զինուած՝ կը ներկայանային, իւրաքանչիւրին պէտք էր պաշտօն մը տալ: Ուստի, հոգաբարձութեան կողմէն որոշուեցաւ քննիչ մասնախումբ մը կազմել, քննելու համար այս անգամ ոչ թէ — ինչպէս որ սովոր է — աշակերտները, այլ ուսուցիչները, նոյն

իսկ վկայագիր ունեցողները: Քննութիւններն սկսան 1897 Մայիսին, 'ի ներկայութեան Մասնախումբին, որուն անդամները մերթ ընդ մերթ կը փոխուէին, թէև բոլորին ալ մտաւորական մակարդակը չ'էր հաւասարեւ իրենց յանձնուած փափուկ պաշտօնին բարձրութեանը: Ինչ ոգորմելի տեսարան. տեսնուեցան ուսուցիչներ, որոնք աշակերտի գրասեղաններուն առջև նըստած, աշակերտի պէս կ'ենթարկուէին քննութեան . . . . Հոս, աչքի զարնող պարագայ մը. ինչիւր է ըմբռնել թէ՛ ուսուցիչ մը քննիչ ինչ կը նշանակէ. անոր ստացած հմտութեան պաշարը թէ՛ անոր ուսուցանելու մէթոտը պէտք է նկատի առնել:

Ուսուցիչ մը կրնայ ստացած ըլլալ շատ մը ծանօթութիւններ, կրնայ իւրացուցած ըլլալ շատ մը լեզուներ ու, թերևս, բանաստեղծի գրագէտի և կամ հաշուագէտի համբաւ ալ վայելած. սակայն, երբ ան, բազմահմուտ ուսուցիչը, չ'ունի մէթոտ, չ'ունի վարեցաւ, ուսուցանելու մասնաւոր յատկութիւն, անոր ուսուցչական պաշտօնը կրնայ՝ երբէք օգտակար ըլլալ վարժարանին, որուն մէջ պիտի յատկացուի իրեն կարեոր տեղ մը, յանձնուելով կարևորագոյն դեր մը, այն է, ապագայ սերունդը պատրաստել յեղին, ու միջավայրին պահանջներուն համեմատ: Ուսուցիչներ կային քննութեան ներկայացող, ընտրելիներուն մէջ, որոնք գրաբարը կ'ըլլած էին, կային որ անգլիէրներն բրոֆէսէօրի արտադր կը գնէին իրենց այցեքարտներուն վրայ, կային ալ որ ֆրանսացիի մը չափ արագախօս, ճարպիկ ճոռոմբան էին, աշխարհիկ ֆրանսացիի մը բոլոր շարժումներն ու բոլոր արտաքինն ունէին. բայց . . . . հարկ կայ ծանրանալ այսպիսիներուն վրայ:

Վերջապէս, քննութիւններն աւարտեցան, ընտրելիները զատուեցան ու Գալստեան Վարժարանի համար բացուեցաւ նոր Շրջան մը, պաշտօններու փոփոխումով և ուսմանց նոր յայտագրի մը խմբագրութեամբ:

Հոգաբարձութեան յարգելի Ատենապետը, որ ա'յնքան եռանդով ու ա'յնքան անձնուրութեամբ վարած էր Գահիրէի Դաղարակաւաց Նպաստաւստոյց Յանձնաժողովի նախագահութեան պաշտօնը, օգնութեան հասնելով բազմաթիւ կարօտեալներու, նիւթապէս ու բարոյապէս միխթարելու, զանոնք, զժբաղդաբար սարբեր կերպով ըմբռնած էր Ազգ. Վարժարանի մը հոգաբարձութեան Ատենապետի ամենափափուկ պաշտօնը. ինք որ, հակառակ իր ստացած եւրոպական կրթութեան, իր զարգացած մտքին և իր բարձր գիրքին, հուռի, շատ հեռի մնացած էր ազգային շրջանակէն, ապրելով զուտ հա-

մազգային կամ միջազգային կեանքը, ալօտ գաղափար մ'անգամ չ'ունենալով մեր ազգային դաստիարակութեան վրայ: Եւ որովհետև հոգաբարձութեան ղեկն ինք կը վարէր, յարմար դատած էր իր ըմբռնումին վրայ ձեւելու Գալստեան Վարժարանի ուսմանց յայտագիրը:

Այնուհետև, վարժարանին մէջ մուտ գտան 20ի մօտ ուսուցիչներ, երկեսու: Հին գրութեան յաջորդեց նոր գրութիւնը, որ կ'ապահովէր նորերուն գոյութիւնը, հին պաշտօնաններուն ամբաթողակաց համեմատական ղեղումովը: Ու այսպէս, ամեն մէկ լեզուի՝ երեքական ուսուցիչ յատկացուեցաւ, ամեն մէկ գիտութեան ճիւղ տարբեր տարբեր լեզուներով աւանդուեցաւ: օրինակի համար, քուստաւարտիքը՝ ֆրանսերէն և անգլիերէն լեզուով, ֆրանսերէնի և անգլիերէնի բաժանումներուն. նոյնպէս և աշխարհագրոյթիւնը ևն:

Կ'ընդունինք թէ՛ օտար լեզուներ սովորել պէտք է, մանաւանդ միջազգային երկրի մը մէջ, ինչպէս է Եգիպտոսը, սակայն ինչպէս կրնանք ընդունիլ թէ՛ հայ տղայ մը կարենայ օգտուիլ գիտութեան որ և է մէկ ճիւղին օտար լեզուով աւանդումէն, քանի որ ան՝ ոչ միայն լեզուին գոնէ տարրական հմտութիւնը չ'ունի, այլ և նախապէս պէտք ունի հասկնալու այն գիտութեան ինքնին գծաւոր հասկնալի կանոններն ու ինչիւրները: Հայ դպրոցական մը, երբ կը տեսնէ հայ ուսուցիչ մը, որ իրեն հետ իրեն անգլիացի կամ ֆրանսացի կը վարուի, ու այդ լեզուներով կ'աւանդէ ուսմանց առարկաները, բնական է թէ՛ չ'պիտի կրնայ օգտակարապէս հետեւիլ այն անբնական ուղղութեան. ուստի, կամաց կամաց պիտի ուժանայ. յետոյ պիտի զուրի և մինչև իսկ գծակամակի յաճախել Ազգ. Վարժարան մը, որ միայն անունովն է ազգային, երբէք չ'տարբերելով օտար վարժարանէ մը. իր մէջ գործադրուած ուսմանց յայտագրովը:

(Շարունակելի)

## Զ Է Յ Թ Ո Ւ Ն Ց Ի

ԶԷՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԷՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԷՆ

Այս է անունը գրքին, զոր վերջերս ստացանք Կովկասէն. նոր հրատարակութիւն մը, Վիէնայի Միխթարեան տպարանէն, ընտրյ տպագրութեամբ, Զէյթունի և Կիլիկիոյ քարտէսներովը, Զէյթուն քաղաքի լուսանկարովը և Զէյթունցիի մը պատկերովը: Գինն է 3 Ֆր. 75, կամ 1,50 ռուբլի. այնքան չահեկան գտանք, որքան ծանօթ է մեզի հայրենակից հեղինակին արժանիքը, թէ՛ իբրև ականատես վկայ իր գիր առած



ուած են Դրան կողմէն, այնպէս որ Ազգ. Պատրիարքարանը պարտաւորուած է հրահանգ զրկել Ռոտոսթոյի ազգայիններուն, որ Այվազեան Սրբազան նորէն պիտի շարունակէ իր Առաջնորդական պաշտօնը մինչեւ զոր անօրինութիւն. սակայն, կը գրեն յիշեալ թերթերը, Ռոտոսթոյի ազգայինները տրամադրութիւն չեն ցուցնիր գործադրելու Պատրիարքարանի այդ հրահանգը. հետեւաբար, Եզրպոսի Առաջնորդը կը գտնուի այսօր անել կացութեան մը մէջ :

Այս տխուր իրողութիւնը մեզի իրաւունք կուտայ կարծելու թէ՛ տեղւոյս Պատկ. Երեսփոխանական ժողովը պարտ էր, Առաջնորդին ընտրութեանը ձեռնարկելէ առաջ, նախատեսել խոչընդոտներն ու այնպէս ճամբայ ելնել : Արդէն Իզմիրեան Սրբազանի օրինաւոր ընտրութեան ապօրինի բեկանումը կը բաւէր փորձառութեան դաս մը տալու մեր Պատկ. Երեսփոխանական ժողովոյն, որ հակառակ իր մէջ պարունակած հեռատեսու վարչապէտ անդամներուն, ինչպէս որ է, յախուռն ու եռանդոտ գործունէութեան մը տխուր հետեւանքը կը կրէ այսօր : Միթէ մեր Ազգ. վարչութիւնը չէ՞ր գիտեր Բ. Դրան թաղուն զիտունները, եւ լուսագոյն գործ մ'ըրած չէ՞ր ըլլար եթէ Իզմիրեան Սրբազանի ընտրութիւնը վաւերացնել տայու. համար ամեն կարելի ջանքերն էր գործ զնէր, որպէսզի այս երկրորդ ու աւելի զատն ձախողութեան չ'մտնուէր :

Սակայն, սոյն խորհրդածութիւններէն պէտք չէ հետեւեցնել թէ՛ Եզրպոսեաներս անտեղեակ ենք Այվազեան Սրբազանի վարչական ձիրքերուն, ընդհակառակն, ի սրտէ կը փափագինք որ մեր արժանընտիր Առաջնորդը, իր պաշտօնին զուլան անցնի օր առաջ, եւ փերկաւէտ ու օգտակար զարկ մը տայ մեր տեղական բոլոր ազգային գործերուն, վերջ մը գնելով մասնաւոր Գահրէի Ազգ. վարժարանին ողբալի կացութեանը :

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՏ ՄԸ. — Բեկրութեամբ կ'իմանանք թէ տեղւոյս Ազգ. Առաջնորդարանը վերջապէս չաճած է, «Օթէլ տիւ Նիլի» փողոց, Սալիկի Թրամվայի գծին վրայ գտնուող ազգային կարեւոր կալուածի մը դատը, զոր բացած էր տեղւոյս հանրաժանութիւնը վաճառականներէն Սէլիմ Սամանի գէմ :

### Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

ՇԵՃՈՒ 22 Յուլիս. — Ճուանս Հիքայի կառավարչին հեռագիրը, 20 Յուլիս թուականով կ'իմացնէ թէ՛ բոլոր գեապանները ողջ են :

ԵՐԺՈՂԱՄԱ 21 Յուլիս. — Ճարտի եւ Չինաստանի կայսերաց միջեւ հեռագիրներու փոխանակութիւններ եղած են ամսոյս սկիզբը : Չինաստան կը պնդէ թէ՛ ինչո՞ւ համար արեւմտեան տէրութիւնները պիտի կրուի բռնութիւն արեւելեաններուն հետ, եւ կը յայտարարէ թէ՛ Ճարտի ինչո՞ւ համար Չինաստանի կողմը չը բռններ : Միքատոն պատասխանած է խորհուրդ տալով Չինու կառավարութեան որ զպէ՛ս ապստամբութիւնն եւ օտար դեպքաններն ազատէ : Սոյն պարագային Ճարտի տրամադիր պիտի ըլլայ ջանալու որ չինական կայսրութեան ամբողջութիւնը պահպանուի :

Սակայն հիւանդները միմիայն այդ անվարժ ձեռքերով եւ տգէտ գլուխներով չ'նմանուեցան :

Մին այն հազուագիւտ բժիշկներէն որոնք կը գործեն ի սէր մարդկութեան, եւ որոնց համար հարուստն ու չքաւորը չեն այլ ինչ, բայց միայն իրենց գիտութեան կարտ տառապողներ, զորոնք կը խնամին հաւասար եռանդով՝ առանց խտրութիւն մ'ընելու մէկէն առնուած ոսկիներու եւ միւսին համար նոյն իսկ իրենց ըրած նպատակներու միջեւ. մին այդ մարդասէրներէն, քանիցս եկած, երեք խեղճերուն համար նարաւորը ըրած, հետզհետէ յառաջացող մահուան հետ մաքառած, մայրն ու անդրանիկը ազատած, բայց Սահակին արտին սաստկութեան տալիս զինաթափ եղած էր :

Մարիամ եւ Ներսէս ալ միայն հանգստութեան պէտք ունէին : Կան իրենց ամեն քմահաճոյքը անթերի գոհացնելու կարող անձինք, որոնք իբրեւ. մեծ շահագիտական գործ կը նկատեն բժշկի մը օրինաւոր այցեգիրներէն բան մը զեղչելը : Այնպիսիք անտարակոյս կ'անգիտեն թէ՛ ամեն դասակարգի պատկանող ճշմարիտ մարդկանց պէտ՝ բժիշկներն ալ ունին իրենց ձրի յաճախողները զորոնք առանց խնամի ձգել իրենց կոչման նախապէս է : Ինչ անուս ապալ է մարդու մը որ տասնեակ հազար ոսկիներու հարստութիւնն մ'ունենալով հանդերձ՝ հազարումէկ քննութիւններով մէկ ու կէս զահեկան զեղչել կուզէ վեց զահեկանի գումարէ մը, որ կը ներկայացնէ շարունակ ուժ օր իր աչքերուն գրուած գեղին գիւր : Չքաւորներու համար կենաց ամենէն կակճալի պարագաներն են հիւանդութիւնն ու մահը :

ՀՈՆՏՐԱ 22 Յուլիս. — Չինու կայսրը հեռագրած է Լուպէ եւ Մաքրիսի նախագահներուն, ինչպէս եւ կիլիսի կայսեր, օգնութիւններ ինչորեւ ըստեղծակամ որպէսզի վեր՝ գրուի արդի կացութեան եւ արտոյայտելու կիլիսի կայսեր իր վիշտերը Բէթլէի Պատնին սպանման համար ապստամբներուն ձեռքով, զորս կը խոստանայ պատժել :

ՊԵՂԻՍ 22 Յուլիս. — Սերպիոյ Ալեքսանդր թագաւորը ծանուցած է իր նշանախօսութիւնն այրիի մը հետ, որ նաթալիս թագուհին նախկին պատուոյ բամբռն է :

Դանիելը հրաժարական տուաւ : ՌԱՇԻՆԿԹԸՆ 23 Յուլիս. — Նախագահ Մաքրիսի առաջարկած է իր միջամտութիւնը չինական դեսպանին շատ մը պայմաններով, որոնք մինչեւ ցարդ չ'հրատարակուեցան :

ԲԱՐԻՉ 23 Յուլիս. — Բէթլէի դեսպաններէն ո'չ մի հեռագիր հասած է Եւրոպա : Պօզնիրը կտրեցին երկաթուղին Հօնիկ Սըրուիդի մէջ. գերի բռնեցին կառախուսը մը հարիւր Հայկէստորներով :

Շատ մ'ընդհարուներ եղած են Օրէնքի եւ Թրանսվալի մէջ :

ՀՈՆՏՐԱ 24 Յուլիս. — Հետախուզութիւն ընող ջոկատ մը հանդիպեցաւ թշնամիին որ Բէթլէէ մի մտ ամուր գիրք մը գրաւած էր : Սաստիկ կուր մը ծագեցաւ մէջերին : Անգիրացիք ստիպուեցան գիշերուան դէմ նահանջելու. կորուսին 1 սպայ եւ 9 մարդ :

### ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ն. Բ. ԽՏԻՎԸ. — Մայէ Սանիյէյի ստացած լուրերուն համաձայն, Ն. Բ. Խտիվը, կատարելապէս առողջացած, Տիվօնէ գացած է Ալպաններու վրայ պոռոյս մ'ընելու :

ԹՈՒՐԻՔԵՐՆ ՈՒ ՉԻՆԱՍՏԱՆԸ. — Կ. Պոլսէն կը հեռագրուի Յուլիս 16 թուականով թէ՛ շատ մեղիթներու մէջ, թուրք քարոզիչներ իրաւունք տուած են Չինացիներուն՝ օտարականաց դէմ իրենց մղած պայքարին մէջ :

ՍԻԻՐԻՈՅ ՄԷՉ. — Գահրէի շատ մը Սիւրիացի երեւելիներ Պէրուլթէ ստացած են նամակներ ծանուցանող թէ՛ զորքերու չղթայ մը հաստատուած է Պէրուլթի եւ Լիբանանու միջեւ :

ՉՈՐՔԵՐՆ ՀՐԱՄԱՆ ՈՆԻՆ ՀՐԱԳԱՆ ԿԱՐԱԿԵՐՈՒ ԱՄԵՆ ԱՆՈՆԳ ՎՐԱՅ ՈՐ ԿԸ ՓՈՐՁԵՆ ՉՂԹԱՆ ԱՆԳՆԵՐԸ, ԼԻԲԱՆԱՆՈՒ ԸՆԸՆ ԵՆԵՐԸ ՀԱՄԱՐ :

Այս տրակոնեան միջոցներուն շարժառիթն է ժանտախտի մշակական երկիւղը :

ԽՈՍՏՄԻՆԱԿՑ ՄՍՆՉ ՄԸ. — Հազիւ 12 տարեկան դպրոցական մը զանակի մէկ հարուածով սպաննեց համատի մանչուկ մը. սպաննութեան շարժառիթն է կոտորուած կաղամար մը :

Հիւանդութեան ժամանակ ամեն բժիշկ անշահախնդիր չ'ըլլար, զեղազորը ապառիկ չ'անշահար, հացագործը, մաղաճառը, կաթնալաճառը նախ ձեռքերին կը բանան. եւ սակայն հիւանդ մը, անհրաժեշտ պէտք ունի այս ամենուն, առանց որոյ մահն անխուսափելի է գրեթէ : Երբ մեռնի, այդ աւելի ծանր եւ ուշադրաւ խնդր մ'է : Գահանայն է որ կ'ուշանայ, զպիրն է որ հարբուի եղած է, ժամկոչն է որ շուրջառը բերելու մոռացած է, սովորական մտելի աղօթքն է որ՝ այն ալ զագաղն առաջնորդող միակ քահանային գլխէն փախած է . . . :

Եւ երբ աղքատ մտելատէրը կը բաղադատէ զագաղին առկեւէն արտորոք գացող կրօնաւորին անիմանալի ռեզալիստութիւնը հարուստ մտելի մը զիսկն առաջնորդող եպիսկոպոսներուն, վարդապետներուն, քահանաներուն, զպիրներուն զիրար զերագանցելու չափ բարձրաձայն երգեցողութեանց, այլ եւ այլ եղանակներուն, նազելի քալուածքներուն, գերեզմանին վրայ բարձրատիճան եկեղեցականի մը կողմէ որոտընդոտ ձայնով կարդացուած դամբանականին եւլն. եւլն. ալ՝ նաբի չտեսնիր խորհելու այն զանազան մեծութեամբ խաչերու, մոմերու, բուրվաններու քանակութեան, ինքզինքը երջանիկ համարելով եթէ ատոնցմէ մէյմէկ հատ տեսնէ իր սիրելին պարունակող տախտակներուն առջեւ, երբ կը բաղադատէ — կ'ըսենք — այս անգին տարբերութիւնները, իրաւունք կ'ունենայ մտածելու թէ՛ աղօթքներն ու թաղման արարողութիւններն անգամ զերծ չեն սակարանի ելեւէջներէն, եւ թէ՛ այն

Շիտակը Զակարիկի դպրոցականները շատ լուր կը յառաջգրին . . . :

### ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԸ

Ամէն ազգ կամ ժողովուրդ իւր սպրտած միջավայրին ու սովորութիւններուն ընդամբ սարքեր տարբեր նկարագրեր կը ներկայացնէ, օրինակի ազգաւ՝ Գերմանացիք երբէք նախանձախնդիր չ'են թէ՛ աղջիկ մը իւր զրամօթիտն ինչ պայմաններու մէջ նայթալթած է, բաւ է որ յետ ամուսնութեան չ'իջարանայ ամուսնական պարտականութիւնները մէջ . . . Անգլիացիք պաղ արեամբ, զիտակ ի ձեռին, կը գիտեն սալալալալին վրայ ուօթութիւնէ գալարուող մահամբձի մը, վերջին վայրկեաններուն մէջ դէմքին ստոնիք ծամածոթութիւններն ու արտոյայտութիւնը . . . Ամերիկայի, Ֆրանսայի եւ ուրիշ յոստոստայտ երկիրներու մէջ իրական սեռը առանց խոչընդոտելու կը կատարէ էրիկ մարդուն պաշտօնը. առանձինն կը յաճախէ ամեն պաշտօնատեղիներն, յաճախ գարեջրատներն եւ այլ ըզբօսավայրեր. վերջապէս կը վայելէ ա'յնպիսի առանձնահանրութիւններ, որոնց մէկ քատորգն իսկ աններելի եւ մինչեւ իսկ գաւազապարտիկ կը նկատուի ըստ նախային կարծեաց :

Ուրեմն, հանրային կարծիքը միջավայրին ազդեցութիւնէն ստացեալ ունակութիւններէն ու ժողովրդին ըմբռնելու կամ դատելու եղանակէն ծաղումն կ'անուս, ու իւր սանձանները կը գծէ ընկալեալ տասննաչորս հոլմներու տրամագրած չափովը :

Արդ, այս առիթի կարեւոր հարց մը կը ներկայանայ մեզ թէ՛ հանրային կարծիքը — որ մեր ներքին ու արտաքին բոլոր գործերուն անուղղակի կառավարողն է — նպատակաւոր է մեզ՝ ի՞նչ ոչ . . . :

Երբ չըջանայութեամբ ու լրջօրէն պահ մը խորհինք, պիտի զգանք թէ՛ հանրային կարծեաց նպատակաւոր հանգամանքներն առ ոչինչ պիտի նկատուին պատճառած վեասներուն, խախտած օգտակար ձեռնարկներուն ու սանձանափակած ստապրիզներուն հանդէպ :

Ճշմարտութիւն մ'է թէ՛ Հայ կնոջ պատուոյ մակարակը, բաղադատման սյուղը՝ աւելի բարձր մնացած է մինչեւ ցարդ, որոյ միակ պատճառը կը նկատուի հանրային կարծիքը. ջնջէ՛ զայն, արամարէ՛, յայնժամ երեւան պիտի գայ հանրային կիրք . . . Իսոց անուրանալի է նախ թէ՛ միեւնոյն պատճառով է որ Հայ կինը զիտակցու թիտն, մտային զարգացման ու անախական յառաջդիմութեան մէջ կաշկանդուած ու միշտ ետ մնացած է :

Ո՞վ է որ կ'արգիլէ կանանց գրական ստապրէզին մուտքը, սզգային ձեռնարկներու կամ հանրային խնդիրներու անձնական աջակցութիւնը, (նոյն իսկ անուսանականը). ո՞վ կը յանգզի միտուել ա' ուր այն կնոջ՝ որ իւր զկաւր անականը այր մարդուն կը կտակէ, հանրային մի ոեւէ ինչորոյ մէջ նորա վարանոտ քայիները ինք խրախուսելով :

Ո՞վ է որ կ'արգիլէ այս ամենը. — Հանրային կարծիքը կամ խճճանքը . . . :

Եկեղեցականները, զորս կը նկատենք իւր նուատարիմ հրամանակատարներ այն վեհ էին որ մի եւ նոյն արեւը, միեւնոյն օդը, միեւնոյն անձրեւը պարզեւած է աղքատաց եւ մեծատանց, որ այրի կնոջ լուսման փարթեմներուն ոսկիներուն կը վերադասէ, չեն աւելի քան մէյմէկ աղօթք ծախելու միջնորդ զի մեծ փառս Աստուծոյն :

Տխուր իրականութիւն : Իսրայէլացիք ճշմարիտ հաւատացեալը վստահ է թէ՛ մրմնջուած աղօթքներու վրայ չչափեր Աստուած իր օրհնութիւնը, եւ թէ՛ մարդ իր կենդանութեան միջոցին՝ ինքն իր ձեռքով կը պատրաստէ իւր անդրաշիրման ճակատագիրը, զոր այլ եւս ոչ հանդէս, ոչ արարողութիւն կարող են փոխելու :

Սահակի թաղման տխրառիթ նոնդակէն ետ ը հազուագիւտ յուղարկաւորներ գրուեցան, փոստպիղը բանն ու բրիչը ուսը զարնելով՝ անհոգաբար հեռացաւ, քահանան փիլոսոփ ժամկոչին յանձնելէն ետքը աղալի մը մտակալ տուելը մտաւ քիչ մը նանգոտանալու եւ տալու նալու համար, եւ չքաւորն Գառնիկ իր կրկն արհեստակիցներուն ընկերակցութեամբ եւ տխրութեամբ նամակեալ սուսն դարձաւ : Մարիամ անկիւն մը կ'իյնարձ հեծկտուքները զսպելու կը ջանար, վախնալով որ ներսէս չ'արթնանայ Երկու կանայք գետինը աւելի եւ տեղերէն խախտած մի քանի ողորմելի կարասիները տեղաւորեր էին ի քթթել ականս : (Շարունակելի)

Այսօր ենթադրենք թէ՛ ունէ՛ ձեռնարկի — ըլլայ շահախնայան, որբանամ, աղքատանամ, կրթական կամ նոյն իսկ յեղափոխական — ուղղութիւնը ճշգրտող անձնագրին խմբագրութեանը մէջ փոխանակ զործոյն յառաջադիմութեանը եւ յարատեւութեանն ապահովող միջոցներուն վրայ խորհելու, աւելի կենսական, աւելի անձնական նկատուածներու, թաղանթներու, փոխադարձ կապակցութեանը երեւան կուգան : « Արդեօք հանրութիւնը ի՞նչպէ՞ս պիտի ըմբռնէ այս կէտը . . . մի գուցէ միապետական համարուի . . . այս ինչ աղային եւ կամ այն ինչ դասակարգին տնտեսութիւնն պատճառէ, կուսակցական ոգի չ'նշմարտի, հանրութիւնը չ'խորհչի . . . եւ այլն, եւ այլն » :

Յետ երկար խորհրդածութեանց՝ կանոնագիրը կը խմբագրուի, հաստատուած՝ հանրային կարծիքին վրայ հանրութիւնը յետ մի քանի դիտողութեանց կ'ընդունի ու կը վաւերացնէ եւ ընդ փոյթ կործարողութեան կը սկսուի . . . բայց գործադրարար կարճ ժամանակէ մը վերջ հանրային կարծիքը բուռն կերպիւ չ'նստի կը խուժէ այդ գծուած ռեզոլյուցիան մտացուած կամ չ'նախատեսուած մի քանի ծակոտիքներէն . վերաքննութիւն, յաւելումներ, պաշտօնանկումներ եւ այլն, ահա՛ ծրագրին այս անգամ եւս հաշտ կ'ընթանայ հանրութեան հետ, բայց ողորմիւ լի ու անզամտեալ ծրագիրը եւ նորա հետեւանքով ձեռնարկը՝ մատնուած հանրութեան աններդաշնակ կարծեաց հոսանքին՝ կը սայլաքին, կը գլտորին միանալու համար միեւնոյն պատճառներով վիժած ձեռնարկներու րեկորներուն :

Անցեալին մէջ զփրախտարար մէկէ աւելի օրինակներ կը հաստատեն վերոյիշեալ ճշմարտութիւնը : Թողով հանրային կարծիքի ուրիշ բազմաանակ փնտրելը, գոնէ տեսնելը թէ կարելի՞ է արգեօ՝ այդ անողոք ու տգէտ դատաւոր օգտակար կամ գէթ անփնաս դարձնել :

Ձայս խորհելէ առաջ, աւելի կարեւոր հարց մը կը ներկայանայ մեզ. ինչ է պատճառը՝ որ հանրային կարծիքը յաճախ փնասաբի կը նկատուի . . . :

Ահա՛ պատասխանը .  
— Որովհետեւ հանրութիւնը, նոյն իսկ իւրաքանչիւր անհատ, մեծ մասամբ չ'ունենալով ինքնուրոյն, սեփական որոշ մի գաղափար, միմեանց գաղափարներով կը սնանի, ոչխարի նման կը հետեւի մեծամասնութեան, առանց անձնական դատողութեան բովէն անցընելու ինչորիք :

Ո՛րքէ՛ ձեռնարկ մը, որու պէտքն զգալի, նոյն իսկ ժամանակի պահանջը կը դառնայ, տեսականին մէջ հանրային կարծիքը խանգալատ փափագող մ'է, անոր իսկ գործնականին մէջ վարանտ կամ չեղոք, ու յետո՛յ . . . : Ամեն ոք զուրս կը նետուի թաքստոցէն ու կեկուած պահուրած էր, այս անգամ գործելու ? եւ ունող ընդհանուր ձեւ մը կ'առնու. փողոց, վաճառատուն, ճաշարան, գինեստուն, սրճարան վերջապէս ամեն կողմ միեւնոյն խօսակցութեան նիւթը, միեւնոյն խրճրածանքներու տարաբլր. սոյն դրութեան մէջ օտարական մը առանց ըմբռնելու խօսակցութեանց իմաստ, երբ լսէ այդ ժողովը, տեսնէ բանախօսներուն եւ ունեկընդիրներուն ամբողջ. այն գաղափարը կը կազմէ թէ՛ Հայք ժրջան, համերաշխ գործունէութեան ասպարեզին մէջ հաճութեամբ ու մեծ եռանդով նուիրուող ժողովուրդ մ'են . . . դա՛ն հեղուցութիւն . . . :

Այո, խուժանը մէկ սիրտ, եռանդուն ու ճարպիկ գործող մ'է՛ երբ մի ո՛ր եւ է հանրօգուտ ձեռնարկ քանդելու կը հետամտի . վասնզի դիտակցութիւնն ու զարգացումը բաւարար կերպիւ մուտ չ'են գտած ժողովրդի զանազան խտերուն մէջ :

Արդ, ինչպէ՞ս կ'երևի, եթէ ուղուի այդ անհետեւանք ու աններդաշնակ կարծիքները կամ խճրածանքները ձաղկելով ուղղութեան ու օգտակարութեան շաւղին մէջ զննել, իրր հիմնական միակ միջոց մը մեզ կը ներկայանայ հանրութեան մտաւորականն ու բարոյականը զարգացնելու անհրաքինս գծուար հարցը, որպէս զի հալածուելով հանրային տգէտ ու պատակալի կարծիքը՝ մուտ գտնէ լուրջ դատողութեան գրոշմը կրող ուղղամիտ քննադատութիւնը որ յառաջդիմութեան խթանը կը նկատուի, ինչպէ՞ս նաեւ կեղծ կամ ապիկար վարիչներու անկողմնակալ դատաւորը :

Բայց պէտք է որոնել թէ՛ ի՞նչ ազդու միջոցներ կան մեր մէջ, բարոյական ու մտաւորական զարգացման ծնունդ ու սնունդ տալու համար :

Մենք Հայերս լինելով կրօնական ազգ մը, եւ չ'ունենալով քաղաքական անկախութիւն՝ պարտաւորուած ենք մեր ներքին ու արտաքին գործոց կառավարութիւնն սպասել երկու տնօրինութիւններէ, եկեղեցական եւ զրախան կամ կրթական, ինչպէս են վարժարանք, կրթարանք, թատրոնք եւ այլն, իսկ ամենէ հիմնականը լրագրութիւնն ու լրարանը :

Եթէ Հայ լրագրութիւնն իր օգտակար դերը լաւ ըմբռնած ու իրադրած ըլլար ժամանակին, արդէն իսպառ անհետացած պիտի ըլլար մեր մէջէն հանրային կանխակալ կարծեաց քանդիչ ունակութիւնը. ինքնին

պիտի կազմուէին լրարաններ, ընթերցատուններ, որբանամներ ու ժամանակին պահանջները շօշափող դիտակցից ու օգտաւէտ Յեզ. Ընդհ. կազմակերպութիւն մը. այժմ ամեն ոք պիտի ճանչնար, կշռէր իր իրաւասութիւնն ու պարսակաւորութիւնները, եւ պիտի գիտնար յարգել իսկական արժանիքները, ու երախտապարտ մնալ առ յաւէտ :

Ուրեմն մաղթենք որ « ՆՈՐ ՕՐ »-ն իր յարատեւութեամբ, գէթ Եգիպտոսի պէս միջազգային ազատ գաղթավայրի մը մէջ, ընու այն մեծ պակասը, որ երթալով զգալի կը դառնայ . . . :

Հո՛ն, անդին, խժոճութեան, աւարի ու թաւանի թատերավայրը, անթիւ միեր ու անտերունչ որբուկներ՝ փոխանակ մօր ստիւքին, կեանքի լիզին, մահը կը ծըծեն. մինչդեռ մենք անկարեկիր ու անողոք, այդ կենսական պահանջի առջև, ծալուած թեւերով, խրացած պահանջներով, փակ աչքերով, մեր սրբազան պարտականութիւնները լրացուցած կը նկատենք միմիայն մեր լեզուին տալով խճրելու, զրպարտելու. եւ այդ կերպով մեր անդիտակցութիւնը շնչեղու պաշտօնը :

Միջավայրը մէկէ աւելի քառանկալնորութեամբ տուած է մեր մտաւորականն ու բարոյականը մշակելու, ուսանելու, եզրպատահալութիւնը ազնուացնելու եւ ժողովուրդը բարձրացնելու, ինչ որ մայրնպատակն է Հարան-Ընթերցատան, որուն միակ օրկանը « ՆՈՐ-ՕՐ »-ը պիտի ջանայ տարածել ու ընդհանրացնել առողջ եւ օգտակար գաղափարները, գերծ կանխակալ կարծիքներէ :

Մեղձձ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

ՏԻԳՐԱՆ Ն. Թ. ՍԱԻԱԼԱՆ

ԿԵՆՍԱԿՐԱԿԱՆ ՅՈՒՇԵՐ

Ս. Գարբիւնեան տպարանէն մաքուր տպագրութեամբ եւ հեղինակին վիճակի պատկերով զարդարուած՝ ի լոյս ելնելու մօտ է հարիւրէ աւելի էջերէ բաղկացեալ սոյն կենսագրական երկն որ իւր շահեկան պարունակութեամբ արժանի է ամեն կարգի ազգայնոց ընթերցման : Ինքնակենսագիրը, Ձմրուոյն հին ծանօթ գրական գէմբերէն մին, իր Երուսաղէմ, Աղեքսանդրիա, Իզմիր եւ Իտալիոյ վարած ուսուցչական եւ այլ կարեւոր պաշտօններու բերմամբ՝ ազգային եւ օտարազգի եկեղեցական եւ աշխարհական նշանաւոր անձնաւորութեանց հետ ունեցած է զբաւոր եւ մտերմական յարաբերութիւններ, զորս գիտցած է ճարտար եղանակաւ մը խառնել իր կենսագրական յուշերուն, այնպէս որ ամբողջ գործն մէկ շունչով կարելի է կարգաւ անձանձրոյթ եւ լարուած հետաքրքրութեամբ :

Որովհետեւ սակաւաթիւ օրինակներ միայն տպուած են սոյն կենսագրական երկէ, փափագողը կրնան այժմէն ընել իրենց յանձնարարութիւնն՝ դիմելով

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ ՏՊԱՐԱՆԸ

Ի Պապար Մուրուր Թիւ 27

Գին 5 ԴԱՀ. ՈՂՁ

ԿԵՐՈՆԱԿԱՆ-ԿՐԹԱՐԱՆ ԳԱՅԻՐԻՒՅ

Հաստատուել 1 յունիւար 1897

Հիմնադիր-ՅԵՐԵՄԻ

Ս. ԲԻՆԻՍԱՆ

Սոյն հաստատութիւնը փոխադրուած է այժմ Ապարին, և Յուլիս 15 սկսեալ կ'ընդունի միայն գիշերօթիկ աշակերտներ, 13 տարին լրացուցած և գէթ նախնական կրթութիւնն ստացած :

Կ'աւանդուի հայերէն, ֆրանսերէն, և անգլիերէն. նաեւ, առւտրական աշխարհագրութիւնն ու տօմարակալութիւնն, գործնական մէթոտով :

Ընդունելութեան պայմաններուն և ուրիշ մանրամասնութեանց տեղեկանալու համար գիմել կրթարանի Տեսչութեան, ՆՈՐ ՕՐ ի խմբագրատունը, Պապար Մուրուրի մէջ, թիւ 38 գրասենեակը, ուր Տնօրէնը կը գտնուի, բայց ի կիրակիէ, ամեն օր կէս օրէ ետքը ժամը 3էն մինչև 6 :

Le gérant, J. MUNIER.

ԿՈՒՉԷ՛Ք ՈՒՆԵՆԱԼ ՈՍԱՆԻ

ԿՈՒՉԷՆ ԼՍՐԻՈՂ, ԽԻՍՏ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԻՐ

ԺՍՄԱՑՈՅՑ ՍԸ

ՄԻՄԻԱՅՆ 120 ԴՐՇ. ՎՃԱՐԵԼՈՎ

ԴԻՄԵՑԷ՛Ք

ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԳԱՀԻՐԷ ՄՈՒՍԻՒ ՓՈՂՈՑ

Ուր կրնաք գտնել նաեւ ՈՍԿԻ ամեն տեսակ ժամացոյցներու ամենազիւրամատչելի գներէն սկսելով մինչեւ ազամանգուզարդ : Արժաթ ժամացոյցներ 50 դրուէն սկսեալ, Նիքէլ ռեժոնթուատ ժամացոյցներ 22 դրուէն սկսեալ. նաեւ Ոսկի, արծաթ եւ ոսկիպատ չըլթաներ եւ գոհարեղէններ, ինչպէս նաեւ պատի եւ քօնաօրի բազմազան բանտիւլներ :

Ամերիկեան նիքէլ ժամացոյցներ, զրասեղանի յատուկ, 10 Դրուչի անհաւատալի գնոյ փոխարէն, որոնք լաւ կ'ըմանին :

Ուրեմն դիմեցէ՛ք ուղղակի :

ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԱՏԱՄԱՐՈՅԺ Պ. ՆԻԿՈՂԻՍՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահրէ, Գաֆէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 դաստիկոնը : Կը բժշկէ բերնի և ակուայի ամեն տեսակ հիւանդութիւնները : Աղքատները ճրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9 :

ՉՈՒԼԻՉ-ՄԵՔԵՆԱԳՈՐԾ

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՐՔ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ ՆԱԿԻՆ ՏՊԱՐԱՆԸ

Շարա Մուհամմէտ Ալի, Հապպաքի

Կը ձուլեն, կը շինեն երկաթէ ու արոյրէ զանազան գործիքներ ոսկերչութեան և ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծորակ, և լին : Յաճախորդները գոհացունող պայմաններով :

ԱՒԱՆԴԱՏԱՐ (ԷՄԱՆԷԹՃԻ)

ԱՍՏԻԿ ԷՍՄԷՐԵԱՆ

ՇԱՐԷ՛ ՄՕՀԱՄՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ ԷԼ ԽԱԼԳ, ԳԱՀԻՐԷ և. Պալոյ մուշակալանաւոր խմբօրին Բով Թիւ 81

Կը յայտարարէ արգոյ հասարակութեան թէ՛ Կ. Պոլսոյ Պաղէ Գարու, Թաշխանի թիւ 26 վաճառատունը ընակող և երկար ժամանակէ ի վեր իր փորձառութեամբ և ուղղամտութեամբ բոլոր պատուաւոր յաճախորդաց վատահութիւնը զրաւող եմանէթճի Աբրահամ էֆ. Պալթայանի հետ ընկերակցութիւն մը կազմած է : Այսուհետեւ Կ. Պոլսէն Եգիպտոս և Եգիպտոսէն Կ. Պոլիս զրկուելիք ամեն տեսակ աւանդներ անկորուստ ու ապահով պիտի յանձնուին սահմանեալ տեղերին :

ՃԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 22 ՅՈՒԼԻՍ 1900

4315	958	5792	6718	6128	296
491	500	1843	1127	2099	2762
3578	3857	3941	4139	6073	7536
7609	7303	7898	8152	8639	9510
		9682	9419	9880	

Տպագրուելու Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ — Պապար Մուրուր